ՄԻԱՀԱՄՈՒՌ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխատավորները մի առանձին ագահությամբ էին սպասում այս օրվան։ Եվ դա պատահական չէ։ Համաժողովի բարձր ամբիոնից պետք է հնչեր իրենց ընտրյալի ձայնը, որը բացահայտելու էր ամբողջ ճշմարտությունը Լեռնային Ղարաբաղի մասին։ Եվ այն հնչեց։ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում Ստեփանակերտի ավտոտրանսպորտային արտադրական միավորման գլխավոր դիրեկտոր Բորիս Դադամյանի ելույթը դարձավ մարդկանց խոսակցությունների հիմնական թեման։

— Ես կարծում եմ, որ մեր ընտրյալը իր հակիրճ ելույթում կարողացավ երկրի աշխատավորներին հասցնել Լեռնային Ղարաբաղի խնդրի էությունն ու արությունը, նրա ակունքներն ու հարցի քաղաքական լուծման ձգձգման հարուցած հետևանքները,— Արմենպրեսի թղթակցին ասաց կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի կազմակերպական բաժնի վարիչ Գեվորգ Տերտերյանը։— Ուզում ենք հուսալ, որ բանախոսի արած կոնկրետ առաջարկությունները սկզբունքային քննարկման առարկա կդառնան իշխանության գերագույն մարմնում, և դրանք պատշաճ գնահատական կստանան։ Սակայն գլխավորը խնդրի լուծման գործնական քայլերն են։ Արցախի ժողովուրդը հավատում է, որ մեր երկրամասի համար բախտորոշ ճշմարտությունը օդում կախված չի մնա։

— Ահա արդեն տասը տարի է, որ թերթ եմ վաճառում և հասկանալի է, այնտեղ տպագրված նյութերին ծանոթանում եմ իմ գնորդներից ավելի շուտ,— ասաց լրագրավաճառ Անժելա Մկրտումյանը։— Ինչ մեղքս թաքցնեմ, ես պարզապես վրդովվում էի, երբ այն աստիճան մակերեսայնորեն, ոչ ըստ էության, հաճախ ոչ օբյեկտիվորեն էր միութենական ընթերցողին մատուցվում մեզ տառապանք պատճառող ցավը։ Բորիս Դադամյանի ելույթից հետո թեթևացած շունչ քաշեցի։ Մարդիկ վերջապես իմացան ամբողջ ճշմարտությունը մեր բաղձանքների մասին։ Իսկ դա արդեն, համաձայնեք, քիչ բան չէ։

Համագումարում ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատի արտահայտած մտքերի հետ իրենց լիակատար համաձայնությունը հայտնեցին նաև քաղաքի այլ բնակիչներ, որոնք ներկայացնում են նրա տարբեր խավերը։ Նրանք հույս հայտնեցին, որ իրենց ընտրյալները այսուհետև էլ հաստատակամորեն, կուսակցական սկզբունքայնությամբ կպաշտպանեն ինքնավար մարզի շահերը։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)